

Կը մերկանայ իր իմաստէն դերադոյն՝
Կը դառնայ էջ մը գրքի...:

« Ա՛հ ո՛չ մէկ ցաւ կը նմանի վաղատամ
Մեր մահերուն լուռ, անթաղ...
Իբրեւ շողի, իբրեւ անձրեւ ու եղեամ՝
Մենք կը շիջինք թեւաբախ...:

« Այլ մեր ըստուերն երբեք չ'ուզեր բաժնուիլ
Կեանքի պայծա՛ռ արեւէն,
Շարժումներու, շունչի, բոյրի լուսարծարծ,
Լուսաշաղա՛խ Պարտէզէն...:

« Մեր հողիներն հոծ ու տրտում կը հակին
Խորաններու վրայ երբեմն...:
Ուր աղօթքներ, մահաղանդեր տրտմադին
Մեր վերյուշին դալկադէմ՝

« Կը ձօնուին մերթ... սակայն ի՛նչքան է չնչին
Խուսկն այդ՝ օդին մէջ ցնդող...
Երբ մեր բիւրեղ արիւնն եղած է հողին
Ակօսներուն մահասօղ...:

« Ու կը ժպտի՛նք... Ա՛հ, ի՛նչ որ պէ՛տք էր հողւոյն՝
Դեռ ապրի՛ն էր երջանիկ...
Դեռ ճանչնա՛լն էր Սէրն իր դէմքով վեհադոյն,
Մորմոքումով իր գողտրիկ...:

« Դեռ լսե՛լն էր օրօրոցէն քնքուշ ձա՛յնն
Նորածինի մը կայտառ...
Դեռ կարդա՛լն էր Վարուժանն ու Թէքէեան
Սայաթ-Նովա՛ն ոսկելար...:

« Քանի որ մենք հողի՛նն էինք, հողն ալ մեր
Հուսկ հանգրբուա՛նը լըռին՝
Ա՛հ հնձուէի՛նք իբրեւ այգի պողաբեր՝
Ծաղկումէն վերջ մեր ոյժին...»:

Աւա՛ղ, ա՛յսպէս կը խօսէին Զինուորներն՝
Խարշափումէն տերեւին,
Լուսնի լոյսէն, սրբինդներէն կարեւիւր,
Հովիտներէն տրտմադին

Եւ դարնըւած թռչունի մը թեւերէն...:

ՄԱՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ

19 Մայիս 1953, Փարիզ

Յ Ա Յ Գ Ա Յ Ի Ն

Երբ տերեւ մը դողայ, գիտես որ հեռուէն
Որբ աստղի մը սիրտն է կարօտով բոցավառ.
Երբ ջուրին մէջ իյնայ, վշտահար մեղմօրէն,
Աստղին բոց սրտիկն է ա՛լ շիջած իր համար...:

Ամէն շող ու կաթիլ, ամէն ձայն, ամէն բոյր,
Միեւնոյն խորհուրդին մասնիկներն են անհուն,
Երկնքին կապոյտն է շափիւղայ մէկ համբոյր,
Որ անտես է հիմա կըրակովն աստղերուն...:

Ծաղիկներ կը հծծեն, եւ քու ձայնըդ ահա՛
Միեւնոյն դիւթերդն է դադանօրէն կրկնըող,
Միեւնոյն արձաղանդն հնչիւնով բիւրեղեայ.

Եւ քու ձեռքըդ բարի կը նետէ ոսկեշող
Բիւր սերմերը ցայգին ծառերուն, դեռերուն,
Քր ծաղիկ վերըստին արդար լոյսն արեւուն...:

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ

Լ Ո Ւ Ս Ն Ի Ծ Ա Գ Ո Ւ Մ Ը

Կեղիւ լուսինն, երազն ինչպէս կը ծընի
Տարտամութեան հորիզոնէն դեռ անգոյն,
Եւ աչքերուն մէջ մեղմօրէն կը լեցուի,
Խառնըւելով ոսկեփոշի տեղեւորուն:

Դաշտերուն մէջ սատափ, ոսկի եւ արծաթ
Սիրոյ նըման աննիւթօրէն կ'անձրեւեն.
Հիմ օրերու դիցուհին է սրտակաթ
Որ կը դառնայ այցելելու մեզ նորէն:

Վարձակի պէս իր վարսերով ծրփծրփուն,
Կը պարէ լուռ ցուրերու ջինջ երեսին,
Եւ աշխարհիս կու տայ համբոյր մը քափուն:

Ու մինչ մարդիկ եւ քոչուններ կը հանգչին,
Կ'անցնի բոյներ եւ տանիքներ մի առ մի
Փայփայելու իր ձեռքերով լուսնակի:

Քենիա, 1942

ԲԱԶՄԱՎԵՊ

ԱՇԽԱՐՀ ԱՄԵՆԱՅՆ

Ի՞նչպէս կանչեմ մահկանացուն կարեկից
Երբ իր սիրտն ալ պըսակուած է փուշերով .
Եթէ խառնենք իրար արցունք ու կսկիծ ,
Կ'ըլլանք երկու մը՝ թիւն ամպեր փոփէ փոփ :

Ու նման ենք յաւերժ լացող աստղերու
Որ կը փնտռեն երջանկութիւնն արեւին .
Ի՞նչպէս կրնանք հանդիպիլ մենք իրարու ,
Երբ չենք գիտեր ո՛ր կը տանի մեր ուղին :

Կը զգանք երբեմն ազդեցութիւն մը տարտամ
Երբ մեր աչքերն անյայտ սիրով կը փայլին ,
Ու կ'արթնանք կարծես նինչէ տարածամ

Ըսկըսելու մեր տառապանքը կրկին :
Ու կը սպասէ այստեղ ամէն մարդ մահուան ,
Անոր համար լացէ՛ք , աշխարհ ամենայն :

Քենիա , 1942

ԸՆԴՈՒՆԷ ԶԱՅՆ

Կը լըսե՞ս թափն աղանիի թելերուն ,
Որ երդիւքիդ վըրան իջաւ շողի պէս .
Սէրն է որ քեզ եկաւ այս ուշ իրիկուն ,
Լոյսըդ վառէ , հսկէ դուն ալ կոյսի պէս :

Մի գուցէ քու լապտերիդ իւղն ալ պակսի ,
Երբոր մտնես նոր առաջատուն հարսնիքի .
Սրտեր կ'ուզէ նման բիւրեղ սափորի ,
Հոն թափելու գեղեցկութիւնը կեանքի :

Զուգեր ծաղիկ , ոչ մանանչներ ոսկեգիծ
Ոտքերուն տակ սփռելու գերդ վարդավառ .
Քեզ կը խորհի , բաց վարդի պէս սիրտդ անքիծ

Ընդունելու անմահութեան գերդ նշխար :
Վառէ լոյսերդ , ել ընդառաջ երգերով ,
Սէրը կու գայ աղանիի պատկերով :

Քենիա , 1942

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Զեմ գիտեր ո՛ր , հանդիպեցայ ես քեզի
Սիրտըս կարծես տաղեց բոցով քու պատկերդ ,
Որ ամէնուր քեզ կը տեսնեմ մեկուսի
Բաց յսփելով աստղի մը պէս մերթ ընդ մերթ :

Կը սիրեմ քեզ առանց երբեք մանչնալու .
Ո՛չ քու անունդ , ո՛չ ազգութիւնդ գիտեմ .
Գեղեցկութիւնը կարօտ չէ բառերու :
Հոն՝ ուր մեզի մէկ աշխարհ կայ , մէկ եղբւր :

Երանի թէ հանդիպէի քեզ կրկին ,
Այդ քու բարի եւ յակընթեայ աչքերով ,
Հոն պիտ' ըլլար ինձ առաւօտ մ'առանձին ,

Շուրջըդ գունեան , շուրջըդ հազար վարդերով :
Բայց ո՞ր արդեօք հանդիպեցայ ես քեզի
Որ ցուպ մ'առած ելլեմ երթամ հոն ուխտի :

Քենիա , 1942

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Ո՛չ աղֆատ եմ եւ ոչ ալ հիւր անծանօթ ,
Ծառայելու եկած եմ քեզ , տիրուհի ,
Քեզ կ'ընծայեմ իմ սիրտս ինչ որ կը պարտի ,
Ամէն բարիք որ կը բերէ առաւօտ :

Ընդունէ՛՛ զիս բուրաստանիդ պարտիգպան ,
Որ վարդերու փոխեմ փուշերն աշխարհի .
Եւ երբ արփին հորիզոնէն կը մեկնի ,
Նուրբ սրբիմզով երանեմ քու պատուհանն :

Զունիմ բառեր արուեստագեղ երգերու ,
Գեղջուկ եմ ես , ունիմ սրտի պարգուքիւն
Եւ իմ դպրոցս է հարազատ բընութիւն :

Բայց քու ծառայ շընորհն ունի սիրելու ,
Եւ մարդկութեան տալու սրբիմզ եղեգնեայ ,
Որ նըւագով տառապանքն իւր մեղմանայ :

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Քենիա , 1942